Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Ուսումնական սեմինար 2. Հայաստանում ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) գործնական կիրառման վերաբերյալ

## ՌԷԳ հաշվետվության պատրաստում. ՌԷԳ-ի վերաբերյալ արձանագրությունը և առաջատար փորձը

23 - 24 նոյեմբերի 2023 թ.
Հայաստանի Հանրապետություն, Երևան

*Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*
*ՄԱԿ ԵՏՀ-ի խորհրդատու*

Action implemented by:
OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries
Funded by the European Union

# ՌԷԳ-ի վերաբերյալ արձանագրության պահանջները

Հավելված IV (Զեկույցի բովանդակությունը)

1. Պլանի կամ ծրագրի բովանդակության և հիմնական նպատակների և այլ պլանների կամ ծրագրերի հետ դրանց կապի մասին տեղեկություններ:
2. Շրջակա միջավայրի, ներառյալ բնակչության առողջության ներկա վիճակի համապատասխան խնդիրները և պլանի կամ ծրագրի չիրականացման դեպքում այդ վիճակի հավանական փոփոխությունը:
3. Շրջակա միջավայրի, ներառյալ բնակչության առողջության վիճակի բնութագրերը այն տարածքներում, որոնք կարող են զգալիորեն տուժել:
4. Պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական, ներառյալ բնակչության առողջության հետ կապված խնդիրները:
5. Պլանին կամ ծրագրին վերաբերող՝ միջազգային, ազգային և այլ մակարդակներով սահմանված բնապահպանական, ներառյալ բնակչության առողջության հետ կապված նպատակները, ինչպես նաև պլանի կամ ծրագրի պատրաստման գործընթացում այդ նպատակների և այլ բնապահպանական, ներառյալ բնակչության առողջության հետ կապված նկատառումների ներառման եղանակները:
6. Հնարավոր էական բնապահպանական, ներառյալ բնակչության առողջության հետ կապված հետևանքներ:

Action implemented by:
OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# ՌԷԳ-ի վերաբերյալ արձանագրության պահանջները.

Հավելված IV (Զեկույցի բովանդակությունը)

7. Պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության վրա հավանական վնասակար զգալի հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ մեղմացման միջոցառումներ:

8. Այլընտրանքային տարբերակների դիտարկում, ընտրության հիմնավորում և գնահատման իրականացման նկարագրություն, ներառյալ՝ նշելով տեղեկատվության տրամադրման հետ կապված դժվարությունները, այդ թվում՝ սարքավորումների խափանումները կամ գիտելիքների բացերը:

9. Պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության վրա հետևանքների մոնիթորինգի (մշտադիտարկման) համար նախատեսված գործողություններ:

10. Հավանական անդրսահմանային բնապահպանական, այդ թվում՝ բնակչության առողջության հետ կապված զգալի հետևանքներ:

11. Լայն լսարանի համար նախատեսված՝ տեղեկատվության ամփոփում.

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Գործնական խորհուրդներ (1)

- Մի՛ ծանրաբեռնեք ՌԷԳ հաշվետվությունը բարդ տեղեկություններով. Դրա հիմնական տեքստը պիտի լինի հակիրճ և պարզ: Մանրամասն վերլուծության բոլոր նյութերը և հիմնական տեղեկատվությունը կարող են կազմվել հաշվետվության հավելվածների տեսքով:
- ՌԷԳ հաշվետվության կառուցվածքը համապատասխանեցրեք գնահատման առարկա հանդիսացող պլանի կամ ծրագրի բնույթին և բովանդակությանը:
- Օգտագործեք հասկանալի լեզու (օրինակ՝ խուսափեք հատուկ տերմինների և առանց համապատասխան բացատրության հապավումների գործածումից)՝ հաշվետվությունը որոշում կայացնող մարմինների, համապատասխան գերատեսչությունների և հասարակության ներկայացուցիչներին դյուրընկալելի դարձնելու համար:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Գործնական խորհուրդներ (2)

- Հաշվետվության մեջ մշտապես ներառեք լայն հասարակության համար նախատեսված ամփոփագիր (ոչ տեխնիկական բնույթի ամփոփագիր):
- Ներկայացրեք տեղեկություններ ՌԷԳ գործընթացի մասին՝ ինչպե՞ս է այն կազմակերպվել, անցկացվե՞լ են արդյոք խորհրդակցություններ համապատասխան պետական մարմինների և/կամ այլ շահագրգիռ կողմերի հետ, ինչպե՞ս են այդ խորհրդակցությունների արդյունքները հաշվի առնվել ՌԷԳ հաշվետվությունը պատրաստելիս և այլն:
- Մի՛ մոռացեք հստակ նշել, թե պլանավորման ընթացքում ՌԷԳ-ի որ առաջարկներն են արդեն ներառվել պլանի կամ ծրագրի վերջնական նախագծում:
- Հստակ նշեք առկա տվյալներում և տեղեկատվության մեջ բոլոր անորոշություններն ու բացերը:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union
EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Ձեր ՌԷԳ հաշվետվության հնարավոր կառուցվածքը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ + ամփոփագիր
2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԱՌՈՒՄ
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
5. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
6. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
8. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
9. ԶԳԱԼԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
11. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

BETTER POLICIES FOR BETTER LIVES | environment programme | IBRD • IDA | WORLD BANK GROUP

# Շնորհակալություն ուշադրության համար